ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 17-Ա

23.09.2004 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԿԻՆ ԳՆԻՇԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամ Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 23 սեպտեմբերի 2004 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի նախկին Գնիշիկի համայնքապետարանի և Արամ Հարությունյանի միջև կնքված Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրում 2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը /վկայականի համար՝ 0055344/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 18-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՄՈՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.04853ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության, 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 03.02.2022թվականի թիվ 01/07.2/0749-2022 գրությամբ ներկայացված դրական եզրակացությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/3 հասցեում գտնվող, Արամ Տեր-Մկրտչյան Կամոյի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.04853 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0030-0011, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, վկայականի համարը՝ 14012022-10-0006) հողամասի հողատեսքը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 19-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14.01.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-Ա ԵՎ 21.01.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1.Արենի համայնքի ղեկավարի 14.01.2022 թվականի <<Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վազգեն Սեյրանի Հարությունյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.0187 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> թիվ 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման 1-ին մասի մեջ <<7>> թիվը փոխարինել <<5>> թվով:

2. Արենի համայնքի ղեկավարի 21.01.2022 թվականի «Արենի համայնքի Արփի բնակավայրի 5-րդ փողոց, 2 փկղ., թիվ 7 հասցեում գտնվող ինքնակամ կառույցը օրիմականացնելու մասին» թիվ 12-Ա որոշման վերնագրի մեջ կատարել փոփոխություն՝ <<7>> թիվը փոխարինել <<5>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 20-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ՄԵՐԳԵՎՈՍԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԵՎ ՄԵՏԱՔՍՅԱ ՄԵՐԳԵՎՈՍԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.10837 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արամ Մերգևոսի Ղարախանյանի և Մետաքսյա Մերգևոսի Ղարախանյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.10837 հա մակերեսով /ծածկագիրը՝ 10-008-0114-0005, գործառնական նշանակությունը՝ վարելահող/ գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության իրավունքը:

2. Արամ Ղարախանյանի և Մետաքսյա Ղարախանյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.10837հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 21-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,1207 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վազգեն Սեյրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0.1207հա հողամասը (ծածկագիրը՝ 10-012-0048-0010, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և բնակելի տունը վերահասցեավորել՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արփի, 5-րդ փողոց, 2 փկղ թիվ 5, նախկինում տրված գ. Արփի 5-րդ փողոց, 2 փկղ, թիվ 7 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**